№ 50 Մարտի 24 (Ապրիլի 5) 1882 Մարտի 24 (Ապրիլի 5) № 50

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Իշխան Դօնդուկով Կորսակովի ճառը մամուլի ներկայացուցիչներին ուղղված։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Գերմանիա։ Կաթողիկոսական խնդիր։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՖԵԼԻԵՏՕՆ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ԴՕՆԴՈՒԿՕՎ ԿՕՐՍԱԿՕՎԻ ՃԱՌԸ ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ

—

Ինչպէս իմ անձնական համոզմունքներով, այնպէս էլ իմ անցեալ գործունէութեան ամբողջ ընթացքում, ես երբէք չեմ եղել մամուլի թշնամի։ Ընդհակառակն, իմ համակրութիւններս միշտ եղել են և կը լինեն աղնիւ և խելացի մամուլի կողմը, որ անկասկած կարող է մեծ օգնութիւն անել ադմինիստրացիային։ Ես շատ լաւ հասկանում եմ որ մամուլի դրութիւնը շատ անգամ լինում է անորոշ ու դժուար։ Հարցերից շատերը, որոնք շօշափում են պետական և հասարակական շահերը, միշտ չեն կարող յարմար ճանաչվել քննադատված լինելու տպագրութեան մէջ, չը նայելով, մինչև անգամ այն հանգամանքին, որ ինքն կառավարութիւնը վերաբերվում է նրանց համակրութեամբ։ Այդ տեսակ հարցերի տարաժամ հրատարակելը, կամ նրանց լուսաբանելը յայտնի տենդենցիական ուղղութեամբ, կարող է ծնեցնել չը ցանկացած տարակուսութիւնները և մինչև անգամ վնասել այն գործին, որին մամուլը ծառայել է կարծում։ Այդպէս պատճառով, դատել դրա վրա՝ յարմար է թէ յարմար չէ շօշափել այդ տեսակ հարցեր յայտնի րօպէին, պէտք է պատկանի բացառապէս բարձրագոյն կառավարութեանը և նրա ներկայացուցչին երկրի մէջ։ Ձեզ, պարոններ, որպէս տեղական մամուլի առաջնորդներին, հարկաւոր է այդ ի նկատի ունենալ, այն երկրի օգտի համար, որի շահերը մեզ հաւասարապէս թանգ են։

Ոչ պակաս փափուկ է և մամուլի յարաբերութիւնը դէպի երկրի բարձր իշխանութիւնը։ Բայց ես համոզված եմ, որ այդ յարաբերութիւնները, երկու կողմերի բարի կամքով, կարող են հաստատվել ամենաբաւականացուցիչ պայմանների վրա։ Ես պէտք է նկատեմ, որ մամուլի օրգանների մեծ մասը, սովորաբար յատշտակվում են մերկացման ուղղութեամբ։ Ես, առհասարակ, ընդդէմ չեմ մերկացումների, բայց, ցաւելով կասեմ, որ մերկացնող յօդուածները շատ անգամ անց են կացնում հարցը անձնական կէտի վրա, որ կարող է միմիայն աղաւաղել փաստերը և գրգռել մարդկային կրքերը, ի վնաս ճշմարտութեան և գործի օգտակարութեան։ Կրկնում եմ, որ մերկացումները մամուլի մէջ, կարող են ճշմարիտ մի ծառայութիւն անել ադմինիստրացիային, միայն այն պայմանով որ դրա հետ պահպանվի գործի խիստ փաստական, օբյեկտիվական տեսակէտը, առանց հարցին խառնելու անձնական կրքերը։ Իմ կառավարութեան ժամանակ Խարկովում և Օդէսայում, չեմ էլ խօսում Բոլգարիայի մասին, ես միշտ առանձին ուրախութեամբ նպաստել եմ տեղական մամուլի զարգացմանը, լաւ հասկանալով, որքան նա կարող է, խելացի և խղճմտաւոր ուղղութեանը հետևելով, լինել հաւատարիմ օգնական ադմինիստրացիայի։ Ցոյս ունեմ, պարոններ, որ և այստեղ, մեր մէջ փոխադարձ հաւատարմութեան հաստատվելուց յետոյ, ես հարկ չեմ ունենայ փոխել իմ առաջվայ յարաբերութիւններս դէպի մամուլը։

Ձեզ, ի հարկէ, յայտնի է որ այս րօպէիս խօսք կայ փոխելու կովկասեան ցէնզուրայի դրութիւնը, ենթարկելով նրան անմիջապէս մինիստրութեանը։ Ձեմ ծածկի ձեզանից, որ այդ դիտաւորութեան իրագործումը նշանաւոր կերպով կը թեթևացնի իմ վրա դրված պատասխանատուութիւնը երկրի կառավարութեան վերաբերութեամբ։ Բայց այնու ամենայնիւ տեղական ցէնզուրայի դրութեան պայմանների խնդիրը դեռ ևս չէ վճռված և ենթարկվելու է այն յանձնաժողովի քննութեանը, որին յանձնված է կովկասեան կառավարութեան նոր կազմակերպութեան պրօէկտի մշակութիւնը։ Բայց և այդ դէպքում ես կուզենայի առաջնորդվել հնադարեան ասացուածով. „audiatur et altera pars“ և այդ պատճառով ես ոչ թէ միայն թոյլ եմ տալիս, բայց մինչև անգամ խնդրում եմ ձեզ, յայտնել ինձ գրաւոր կերպով ձեր մտքերը և ցանկութիւնները այդ հարցի մասին, կատարեալ անկեղծութեամբ և պարզութեամբ, որպէս զի ես կարողանայի ծանօթանալ հարցի մէջ շահ ունեցող երկու կողմերի կարծիքների հետ։ Բայց նախազգուշացնում եմ ձեզ, որ ձեր տեղեկագիրը չի ունենայ ոչինչ պաշտօնական նշանակութիւն և իմ կաբինէտից հեռու չի գնայ։ Նա միմիայն ինձ անձնապէս կօգնի լուսաւորել այն հարցը, որի մասին ինձ հարկաւոր կը լինի յայտնել իմ վերջնական խօսքս, նախ քան այդ հարցը ներկայացնելու բարձրագոյն կառավարութեան որոշմանը։ Իսկ երբ իմ վերջնական եզրակացութիւնը արդէն ներկայացրած կը լինի, ես պատրաստ կը լինեմ նրան մասնաւոր կերպով հաղորդել ձեզ։

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

—

Մարտի 12-ին

Մենք ուրախութեամբ կարդացինք «Մշակի» 13 համարում պ. Ա. Յովհաննիսեանի նամակը, որից իմացանք, որ ուսուցչական ժողովը կայանալու է այս տարի օգոստոսին։ Պէտք է խոստովանած, որ շատերը վաղուց կասկածում էին ժողովի կայանալու մասին, բայց երբ կարդացին Էջմիածնի ճեմարանի տեսուչ պ. Նահապետեանի «Արարատի» հրաւէրը, էլ չէին կասկածում որ ժողովը չէ կայանալու, կարծելով որ եթէ ժողով լինելու լինէր, պ. Նահապետեանը կարիք չէր ունենայ միայն ճեմարանի ուսուցչական խորհրդով բոլոր դպրոցների համար ընդհանուր ծրագիր մշակել, իսկ ժողովը կայանալու մասին, կասկած չը կայ, որ ամենից առաջ նա միջոց կունենար իմանալ, զննվելով Էջմիածնի ծոցում։ Երևի մի այլ նպատակ ունէր պ. Նահապետեանը. բայց մենք չենք կարծում, որ Էջմիածնի ճեմարանի ինտերեսը այլ լինէր միւս հայոց ուսումնարանների ինտերեսից, որ նա ցանկանում է առանձին գործել ընդհանուր ուսուցչական ժողովից. ինչ և իցէ ժողովը կայանալու է։

Մեր կարծիքով ժողովի ամենագլխաւոր պարտաւորութիւններից մէկն է քննել ուսուցիչների ներկայ դրութիւնը։ Մեզանում ուսուցիչների դրութիւնը ամենավատթարն է. չը կայ ոչ մի պարապմունք, որ փոքր ի շատէ չապահովացնէ մարդուն, միայն ուսուցչութիւնն է, որ չէ ապահովացնում մեզանում. և յիրաւի ինչ դրութեան մէջ է մեր ուսուցիչը. շատ անգամ աշխատելով շատ տարիք, նուիրելով իր կեանքի լաւ մասը հայոց ուսումնարանին, հարկադրված է լինում չնորհիւ մի հոգաբարձուի մեկ փողոցում առանց մի կտոր հացի և ոչ մի միջոց չունի բողոքել դրա դէմ ոչ ոքին։ Մենք այստեղ մի դիպուած ենք բերում, բայց ով չէ կարող ցնասել խեղճ հայ ուսուցչին, մի հոգևորական, մի բժիշկ կամ ադվոկատ տեսուչ, մի հոգաբարձու կամ մի աղա—ամենքը կարող են առանց մի կտոր հացի թողնել խեղճին և բոլորին պէտք է շողոքորթէ խեղճը, բոլորի առաջ թեքի իր վիզը, որ կարողանայ մի կտոր հաց վաստակել իր համար, և մինթէ այսքան ստոր դրութեան մէջ գտնվելով, ուսուցիչը կարող է այն բարձր պաշտօնին համապատասխան լինել, որին ծառայում է նա։ Ժողովուրդը միայն դիտէ շատ բան պահանջել ուսուցչից, բայց ինքը ոչինչ չէ ուզում տալ. և ինչ կարող է անել ուսուցիչը, երբ գտնվում է այս դրութեան մէջ։ Այս է գլխաւոր պատճառը, որ մենք շատ քիչ ունենք այնպիսի ուսուցիչներ, որոնց կեանքի գլխաւոր նպատակը լինէր ուսուցչութիւնը։

Մենք տեսնում ենք, որ մեր ուսուցիչներից շատերը ուրախութեամբ թողնում են ուսուցչութիւնը, երբ գտնում են մի այլ ապահովացնող պաշտօն իրանց կեանքումը վարժապետ տեսած չը լալով, առջի բերան հրէշ և յետոյ կարմիր մազերը տեսնելով հրէայ են կարծել։ Խեղճ մարդը սկսել է խաչակնքել, և ճշմարիտ «հայ քրիստոնեայ եմ» ասելով աշխատել է հաւատացնել, բայց երբ կարմիր վարժապետին ձեռքի գաւազանով եկեղեցի մտնելը տեսել են, այլ ևս կասկած չէ մնացել հրէայ լինելուն, և մարդը խսկոյն վռնդել են։ Թշուառ նարնջավաճառ ուսուցիչը այժմ ճշմարիտ թափառական հրէայի մը նման ման է դալիս և-դել Աքքերմանի փողոցներում։

Երեխաները առանց վարժապետի մնալով, իրանց ապագայ հեշտալեր ամուսնութեան վրա նախագիծներ չենելով և փողոցներում ընկոյզ խաղալով, թող ժամանակ անցկացնեն, աղաները այս անգամ Քիշնէվից մի ուրիշ վարժապետ բերել տուել են, բայց վարժապետը այն պայմանաւ է եկել, որ մեծ տօնի օրեր շաբաթան կարդալու համար պէտք է Քիշնեվ գնայ և կրկին Աքքերման գայ. պատճառը՝ ձայնը շատ գեղեցիկ լինելով Քիշնէվի հայ ժողովուրդը չէ կամեցել իր քաղցրաձայն տիրացուից զրկվել։

Ներկայումս Աքքերման վարժապետ չը կայ, որովհետև Աւագ շաբթուան «Այսօր անճառ» շաբաթանը կարդալու համար վարժապետը Քիշնէվ է գնացել։

(Քանի մը տարի առաջ ամառուան եղանակում Թիֆլիսի պարտէզներից մէկին մէջ ամառանոցում Թիֆլիսի պարտէզներից մէկին մէջ ամառանոցում

ՖԵԼԻԵՏՕՆ

Հայաստանը միայն պալատների և եկեղեցիների աւերակներ չունի. ունի նաև դէս ու դէն ցրված հայերի չնչաւոր բեկորներ և մնացորդներ, երկուսին մէջ տեղը տարբերութիւն մը կայ միայն, այն է, որ վերջինները լուսանկարվելու չափ հետաքրքրական արժէք չունեն։

Ցիշեալ մարդկային բեկորների մէկ մասն էլ զբաղվում է Օդեսայի մօտ, Աքքերման անուն գիւղի մը մէջ, որտեղի հայերը 200 ընտանիք կազմող մը ժողովուրդ լինելով, հայերէն բնաւ չեն խմանում, թրքերէն և ռուսերէն են խօսում, բայց այս երկու լեզուներն էլ իրանք խօսում, իրանք են հասկանում։

Մի քանի անգամ գիւղին պատուելի աղաները հաւաքվել են լուսաբանելու համար թէ, արդեօք իրանք աշխարհիս որ կողմիցը եկել են, և որ ազգի ծագումն են, բայց այս գաղանիքը չը կարողանալով պարզել, համոզվել են թէ կամ թաթար են կամ ռուս, և կամ արարչագործութեան սկզբում իրանք էլ ուրիշ չնչաւոր արարածների հետ ի միասին Աքքերմանում ստեղծված, կամ լաւ ևս ջրհեղեղից ետքը երկոտանի սուրբ կենդանեաց հետ միատեղ զոյգ զոյգ Նոյ նահապետի տապանից դուրս եկած են։

Հայութեան վրա ոչինչ գաղափար չունեցող այս արարածները, միանգամայն կարծելով թէ աշխարհիս վրա հայ չէ մնացել, իրանք էլ քիչ է մնացել որ բոլորովին կորչեն, երբ, բարեբաղդաբար ճանապարհող հայ վարդապետին մէկը, քանի մը տարի առաջ յարմար ժամանակին այնտեղ է հասել, եկեղեցու մէջ տաճկերէն լեզուով ազգու մի քարոզ տալով «սթափվեցէք ձեր քնից, խոշոր բաց արէք ձեր աչքերը, ուշ դրէք, ականջ դրէք սատանայի, հայ էք, ամենքդ էլ հայի զաւակներ էք, Անի քաղաքից գաղթողներ էք», և այլն զօրեղ խօսքերը Աքքերմանցւոց վրա այնպէս տպաւորութիւն են արել, որ սկսել են դառնապէս լալ և ողբալ։ Իսկոյն նոյն գիշերը աղաները ժողով գումարելով և մի քանի տակառ գինի բերել տալով ահագին քանակութեամբ կոնծել են հայերի, ռուսերի, թաթարների, թրքերի, հրէաների, ամեն ազգերի կենացը, և գինու զօրութեամբ նոյն գիշեր ի նպաստ կրթական ծախուց 10,000 ռուբլի ստորագրվելով, հետևեալ օրը հազիւ հաղ վճարողներ գտնվել են միայն 500 ռուբլի, որ սահմանվել է Աքքերմանի ա, բ, գ չը գիտցող հայ մանկտւոյ դաստիարակութեանը։

Աքքերմանը Նախիջևանի թեմական տեսչութեան ներքև է եղել անունով միայն, ըստ որում աղաները ուզել են Նախիջևանի ուսումնական ժողովին դիմել վարժապետ մը ինդրելու համար, բայց ոմանք «մենք կ. Պոլսից պիտի բերել տանք» ասելով դժկամակել են, վերջապէս խել մը վիճաբանութիւններից յետոյ, վարժապետութեան արհեստովը քաղցից մահուան դուռը հասած և նարինջ ծախելով հոգեպահիկ հացը ճարելու դատապարտված դեղին մօրուքով մի ուսուցիչ բերել են Օդեսայից։ Բայց մինչև սրա գալը, երեխաները անկիրթ չը մնալու համար՝ Աքքերմանից քահանայի մը աղջիկ յանձն է առել մանկանց կրթութիւնը։

Դեռահաս, չափահաս, արու և էգ, աշակերտ և աշակերտուհի երկսեռ և խառն ի խառն դամենքն ի միասին սենեկի մը մէջ լցնելով, հայ հերոսուհին սկսել է սրանց կրթելու... Բայց ինչ կրթութիւն, Աստուած պահէ, տէրտէրին աղջիկը, նորաձև ազատ դաստիարակութեան և բացարձակ անձնիշխանութեան սկզբունքներով ուղեցել է երեխաներին կրթել։ Նախ և առաջ «Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր» պատգամին հպատակվելով աշակերտները աշակերտուհիներին հետ ամուսնացնելու նախապատրաստութեամբ հոգ տարել է, ասելով թէ «Յակոբ, երբ դու մնծանաս, ահաւասիկ Վարդուհին պիտի առնես, և դու Սաթինիկ, երբ 14 տարեկան լինիս, Համբարձումը պիտի առնես և այլն...։»

Այս նորատեսիլ դաստիարակութիւնը բարեբախտաբար տակաւին անախորժ մի հետևանք չունեցած, ծախած նարինջներուն դոյնին նման մազեր կրող չէկ վարժապետը Օդեսայից եկել է։ Աղաները իրանց կեանքումը վարժապետ տեսած չը լալով, առջի բերան հրէշ և յետոյ կարմիր մազերը տեսնելով հրէայ են կարծել։ Խեղճ մարդը սկսել է խաչակնքել, և ճշմարիտ «հայ քրիստոնեայ եմ» ասելով աշխատել է հաւատացնել, բայց երբ կարմիր վարժապետին ձեռքի գաւազանով եկեղեցի մտնելը տեսել են, այլ ևս կասկած չէ մնացել հրէայ լինելուն, և մարդը խսկոյն վռնդել են։ Թշուառ նարնջավաճառ ուսուցիչը այժմ ճշմարիտ թափառական հրէայի մը նման ման է դալիս և-դել Աքքերմանի փողոցներում։

Երեխաները առանց վարժապետի մնալով, իրանց ապագայ հեշտալեր ամուսնութեան վրա նախագիծներ չենելով և փողոցներում ընկոյզ խաղալով, թող ժամանակ անցկացնեն, աղաները այս անգամ Քիշնէվից մի ուրիշ վարժապետ բերել տուել են, բայց վարժապետը այն պայմանաւ է եկել, որ մեծ տօնի օրեր շաբաթան կարդալու համար պէտք է Քիշնեվ գնայ և կրկին Աքքերման գայ. պատճառը՝ ձայնը շատ գեղեցիկ լինելով Քիշնէվի հայ ժողովուրդը չէ կամեցել իր քաղցրաձայն տիրացուից զրկվել։

Ներկայումս Աքքերման վարժապետ չը կայ, որովհետև Աւագ շաբթուան «Այսօր անճառ» շաբաթանը կարդալու համար վարժապետը Քիշնէվ է գնացել։

(Քանի մը տարի առաջ ամառուան եղանակում Թիֆլիսի պարտէզներից մէկին մէջ տը-

բալմունք. և դա չատ հասկանալի է. թող ինչ ուզում են ասեն մեր իդեալիստները, բայց հացի խնդիրը միշտ գլխաւոր տեղը կը բռնի մարդոց կեանքի մէջ: Երբ որ ուսուցչի մի կտոր հացը ապահոված կը լինի, երբ որ նորա ապագան կախված չի լինի մէկի կամ միւսի կամայականութիւնից, այն ժամանակ միայն նա միջոց կունենայ զարգացնել իր գիտութիւնը, լաւ հասկանալով որ քանի կատարելագործված կը լինի, այնքան ապահոված կը լինի:

Երբ որ հայ ուսուցչի դրութիւնը ապահոված կը լինի, այն ժամանակ բարձր ուսում ստացած երիտասարդներն էլ չեն փախչի ուսուցչութիւնից: Թող հայ ուսուցչի դրութիւնը կախված չը լինի զանազան անձանց կամայականութիւնից, թող միջոց գտնվի որ հայ ուսուցիչը տասն և հինգ կամ քսան տարի ծառայելուց յետոյ մի փոքր պենսիայով ապահոված լինի: Ահա գլխաւոր հարցերը, որ պիտի վճռի լինելու ուսուցչական ժողովը. որովհետև մինչև ուսուցիչների դրութիւնը ապահոված չը լինի, մենք չենք կարող ունենալ օրինաւոր ուսուցիչներ. իսկ առանց օրինաւոր ուսուցչական խմբի անկարելի է բարւոքել մեր ուսումնարանները:

Կիլի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեր խմբագրութեան մէջ գրվել են պ. Քիւրքճեանի Անիի աւերակների ֆոտոգրաֆիական ժողովածուին հետևեալ անձինք: Տիկին Թամար Կամկամեան Ղզլարից, որ գրվել է Մոսկվայում ապրող պ. Թանդօվի համար և ուղարկել է մեզ 20 բուբլ 50 կոպէկ, պ. Յակոբ Խաչատուրով, Բագուից, որ գրվել է չորս օրինակի համար և ուղարկել է մեզ 82 բուբլ և վերջապէս պ. Կոնստանտին Մէլիք Շահնազարեանց, Դէրբէնդից, որ ուղարկելով մեզ 20 բուբլ, յայտնում է որ պ. Սարգիս Շահէջանեանց գրվում է ժողովածուի մի օրինակին և նուիրում է նրան Դէրբէնդի Մարիամեան օրիորդաց դպրոցին: Ընդամենը պէտք է հաշվենք պ. Քիւրքճեանին 122 բուբլ 50 կոպէկ:

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են: «Օրերումս Գիւզալդարա գիւղում պատահեց մի սովորականից դուրս որդեծնութիւն. մի հայ կին, երկունքից ազատվելով, ծնեց չորս հատ տղայ, առանց որ և է արատի: Բայց նորածինները երկար չապրեցան. նրանցից երկուսը մկրտվելուց առաջ, իսկ միւս երկուսը անմիջապէս մկրտվելուց յետոյ վախճանվեցան:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Այժմեան պատգամաւորների ժողովի մեծամասնութեան թշնամութիւնը դէպի Գամբետա նորից յայտնվեցաւ այդ ժողովի բիւդժետային մասնաժողովի անդամների ընտրութեան ժամանակ, զրում է „Голосъ“ լրագիրը: Մասնաժողովի մեծամասնութեան անդամները կազմում են այն պատգամաւորները, որոնք Լէօն Սէի ֆինանսական նախագիծների կողմնակից և նախկին մինիստրութեան ֆինանսական քաղաքականութեան թշնամիներ են: Այդ ընտրութիւններին աւելի մեծ նշանակութիւն տալու համար մասնաժողովը իր նախագահ ընտրեց հանրապետութեան նախագահի փեսայ և ծիլ ֆերրիի կառավարութեան ֆինանսների մինիստրի օգնական Վիլսօնին: Քանի որ բիւդժետային մասնաժողովը այդպէս է կազմված, նա կընդունի ֆինանսների այժմեան մինիստրի բոլոր առաջարկութիւնները և երկաթուղիները պետութենից յետ դնելու հարցը այնպէս կը վճռի, որ բոլորովին հակառակ կը լինի Գամբետայի կառավարչական նախագծի գլխաւոր կէտերից մէկին:

Պ. Ֆրէյսինէ և նրա ընկերները կարող են ազատ շունչ քաշել: Այլ ևս նրանց վրա ոչ ոք սպառնում շուտով կորցնել մինիստրական պաշտօնները: Գործին անձանօթ անձինք կարող են ենթադրել, որ մինիստրութեան դրութիւնը կատարելապէս ամրացել է, որովհետև պատգամաւորների ժողովի մեծամասնութիւնը նրա կողմը յայտնվեցաւ:

Բայց չը պէտք է մոռանալ, թէ վերոյիշեալ անցքը ինչպէս կատարվեցաւ: Այժմ ամենքի համար ակներև է, որ Լէօն Սէի նախագիծների կողմնակից մասնաժողով ընտրող պատգամաւորների եռևը կանգնած են երկաթուղիների հզօր ընկերութիւններ, որոնց Գամբետտա կամենում էր զրկել ահագին եկամուտներից և նրանց պետութեանը յատկացնել: Գամբետտա, վերջին տարիների ընթացքում թոյլ չը տալով արմատականներին ղեկավարել երկրի գործերը, այնպէս զայրացրեց նրանց իր դէմ, որ նրանք համաձայնութիւն կայացրին այն հանրապետականների հետ, որոնք իրանց հովանաւորութեան տակ են արել երկաթուղիների ընկերութիւններին: Բայց այդ համաձայնութիւնը երկարատև չէ կարող լինել: Արմատականները շուտով կը հասկանան իրանց գործած սխալը: Իսկ եթէ նրանք չեն փոխի իրանց բռնած ընթացքը, այն ժամանակ նրանց ընտրողները լուռ չեն մնայ: Մինչև այժմ պ. Ֆրէյսինէ աշխատում էր փայփայել արմատականներին և նրանց իր կողմը դարձնել զանազան խոստումներով, գիտենալով, որ այդ կուսակցութեան օգնութիւնը անհրաժեշտ է այժմեան մինիստրութեան ֆինանսական նպատակների համար: Բայց հէնց որ մինիստրութեան ֆինանսական նախագիծները կը հաստատվեն, արմատականները ոչինչ չեն ստանայ, որովհետև, եթէ կառավարութիւնը կատարէ արմատականներին խոստացածի կէսը, նրանից կը հեռանան բոլոր չափաւոր հանրապետականները: Միապետականները այդ դէպքում նոյնպէս կընդդիմադրեն կառավարութեանը:

Հասարակական կարծիքը Ֆրանսիայի մէջ արդէն այդպէս է փոխվում: Այժմեան օրէնսդրական շրջանի ապարդիւն լինելը, Գամբետայի մինիստրութենից հերթական դարձրած օրէնսդրական բոլոր վերանորոգութիւնների յետաձգելը և վերջապէս հետզհետէ պարզվող փաստը, որ Ֆրանսիան անցեալ աշնան պէս բոլորովին կորցրեց միջազգային նշանակութիւնը, չէին կարող չը ներգործել հասարակութեան վրա: Մի մեծ ժողովրդին այդպիսի անվայել դրութենից դուրս գալու պահանջը հետզհետէ տարածվում է Ֆրանսիայի մէջ, մի և նոյն ժամանակ պարզվում է և այն ճշմարտութիւնը, որ այդ դրութիւնը չի փոփոխվի, քանի որ երրորդ հանրապետութեան գործերը նրա այժմեան կառավարիչների ձեռքին կը լինեն:

ԳԵՐՄԱՆԻԱ

—

«Köln. Zeit.» լրագիրը հաղորդում է մարտի 21-ից: Այսօր սպասում էին Բերլինի մէջ Իշխան Բաղդիվիլի վերադարձին Կ. Պոլսից: Երեկոները հրատարակվող մի լրագրի տեղեկութիւնների համեմատ նա արդէն վերադարձել է: Այն սիրալիր ընդունելութիւնը, որ արվեցաւ Բուխարեստի մէջ գերմանական արտաքոյ կարգի դեսպանութեան վերադառնալու ժամանակ, աննկատելի չանցաւ և նոյնպէս քաղաքական նշանակութիւն ունի: Առանց այդ էլ յայտնի էր, որ եթէ պետութիւնները ստիպված կը լինէին պարզել իրանց փոխադարձ յարաբերութիւնները, Ռումինիան Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի կողմը կը բռնէր: Այդ գործի պատճառը պէտք չէ համարել վերջին պատերազմի հետևանքները: Զարմանալի է, որ Բուխարեստի մէջ, որտեղ միջոց ունէին հսկել համայն սլավեանների գործունէութեան վրա, երկիւղով էին վերաբերվում ապագային: Այժմ այնտեղ էլ հանդստացել են և կարծում են, որ մի քանի ժամանակ, մանաւանդ ներկայ ամառվայ ընթացքում խաղաղութիւնը չի խանգարվի: Խաղաղութեանը ամենալաւ գրաւական մի կողմից այն է, որ նա պահանջ է դարձել Ֆրանսիայի համար, իսկ միւս կողմից, որ Ռուսաստանը թէ ֆինանսական և թէ պատերազմական կողմերից պատրաստ չէ: Նոր փոխառութեան մասին լուրերը, որի պատճառով Ռուսաստանը իբր թէ բանակցութիւններ է սկսել Փարիզի մէջ, կասկածելի են և երևի անհիմն: Ռուսաստանի համար էլ հեշտ չէ այդպիսի փոխառութիւն անել: Կոմս Վ. Օլկենշտէյնի մասին պատմված առասպելից վերջապէս հասարակութիւնը ազատված է: Այլ ևս ոչ ոք չէ հաւատում, որ նրան յանձնված էր աշխատել Բոսնիան և Հերցեգովինան Աւստրիայի հետ միացնելու համար: Հաւատացնում են, որ կոմս Վ. Օլկենշտէյն, իբրև աւստրիական արտաքին գործերի մի բաժնի խորհրդատու, մեծ ծանօթ լինելով Դունայի հարցի հետ, ցանկացաւ Ս. Պետերբուրգ գնալուց առաջ անձամբ լուծել այդ հարցը, փոխանակ նրա քննութիւնը զանազան մասնաժողովների երկար քննութեանը ենթարկելու: Աւստրիական կառավարութիւնը տուեց իր համաձայնութիւնը և Վ. Օլկենշտէյն ձեռնարկեց այդ գործին: Դունայի հարցի լուծման ըսպասում են մանաւանդ այն պատճառով, որ Լորդ Գրենվիլ Փարիզ գրած մի նամակով յայտ յայտնեց, թէ կարելի է այնպիսի հիմունք գտնել, որից բոլոր կողմերն էլ բաւական կը լինեն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

—

Վերջին օրերս ազգային թերթերէ ոմանք և թէ հասարակութենէ շատեր մեծ կարեւորութիւն տալու վրայ են Սսոյ Կաթողիկոսական ծանուցեալ խնդրոյն:

Մենք սոյն խնդրոյն բնաւ կարևորութիւն չը տալէ ի զատ, զայն խնդիր ընել անգամ չենք ուզեր. որովհետև քաջ գիտենք թէ կաթողիկոսութիւն կոչուածն զուտ կրօնական ըլլալով, և սոյն պաշտօնին կոչուողներն միշտ ազգէն ընտրուելով, բնաւ ազգին էական շահուցը չեն կրնար հակառակիլ, մինչև իսկ ձեռքի տակէ ազդեցութեան տէր ազգի յառաջդիմութեան ասպարէզը, չը նայելով որ ինչ հանգամանքների ենթակայ եղել է այն ազգը, ուստի առաջարկում եմ այս բաժակը Շիլլերի և մեր անցեալ և ներկայ հայազգի անմահ բանաստեղծների կենացը, որ մեր քնարը ծաղկեցրել են, չը նայելով որ ուրիշ ծաղկեցնողներ էլ պիտի ունենանք, ուրեմն մեր բաժակները մինչև վերջին կաթիլը պէտք է դարդրկենք, որովհետև չը նայելով որ..... (հանդիսականաց համբերութիւնը հատնելով, բաժակները կը դարդկեն առանց վախճանին սպասելու):

Իսկ մինը հարցնում է մօտը եղողին.

—Դու ճառ խօսող պարոնին ճանաչում ես:

—Այո, հիմի նոր ճանաչեցի:

—Ազգանունը չը գիտես:

—Ի՞նչպէս չէ, պարոն «Չը նայելով որ:»

* * *

Երեք շաբաթ առաջ Վիէննայի երևելի բժշկապետ պրոֆէսօր Դուխէքը, անմահ անունը մահացեալների մէջ թողնելով մահկանացուն կնքեց: Երկրագնտիս զանազան կողմերից հիւանդներ գալիս էին լուսահոգի պրոֆէսօրի ձեռք բժշկվելու համար: Ուշ մնացողները ճանապարհին, իսկ ժամանակին եկողներն էլ սովորաբար Վիէննայում մնում էին, բացի այն հիւանդներից՝ որոնք իրանց բնական կազմուածքի չնորհիւ և դեղերի զօրութեամբ առ ժամանակեայ կերպով մի քանի տարի էլ ապրելու պայմանով կը բժշկվեին:

Դուխէքի հիւանդութիւնը կոկորդի թեթև մը ցաւ էր, բոլոր արհեստակիցները, պրոֆէսօր, օգնական. օժանդակ, աշակերտ, ամենքը ժողովեցան 'ի միասին, դինքը շրջապատեցին և աշխատեցան ազատելու ներկայ տարոյս Հիպոկրատը, բայց ձար չեղաւ, կարծես թէ անպատճառ մեռնել էր ուզում անարծաթ *) բժշկապետը:

Յուղարկաւորութեան հանդէսը կատարվեցաւ շքեղագոյն և պերճագոյն կերպիւ: Ծաղկեայ և զանազան պսակներով ծածկված արծաթապատ դագաղը կրող արքայավայել և մեծաշուք կառքին լծված էին վեց սև ձիեր, որոնց գլխին վրա դետեղված ջայլաման նոյնպէս սև փետուրները ամեն քայլափոխի վայելչարար ծածանում էին, 60 հոգիէ բաղկացած նուագածուաց խումբը սրտառուչ և մեղմ ներդաշնակութեամբ կը հնչեցներ թաղման ողբալից եղանակ մը: Հանդէսը ծանրաքայլ առաջ էր գնում, անհամար յուղարկաւորը, անթիւ կառքեր հետևում էին. միայն վեց կառք լիքն էին թաւշեայ և մետաքսեայ ժապաւէններով զարդարված ծաղկեայ պսակներով, որոնք 'ի յիշատակ հանգուցելոյն ծանօթների և աշակերտների կողմից նուիրված լինելով, կառքերին մէջի, դրսի, ետևի և վրայի կողմերը մինչև անգամ ձիերի վրա դրված էին:

Հանդէսը այնքան փառաւոր էր, որ ամենքին երևին վրա ուրախութեան մի փայլ էր տեսնվում, կարծես թէ շատերը փափաքում և պատրաստ էին մեռնելու, այն պայմանով որ իրանք էլ նոյն շքեղութեամբ թաղվեն:

Հաղարաւոր շքաղիր յուղարկաւորք մինչ Ֆոթիվ Քիրխի եկեղեցին եկան, ուր ամենքը չը կարողանալով ներս մտնել, մեծ մասը դուրսը մնաց: Սովորական դամբանականաց և հոգեհանգիստ արարողութեանց կատարմանէ վերջը Դուխէքի մարմինը գերեզմանատուն փոխադրվեցաւ ոչ նուազ շքեղ հանդիսով: Դուխէքը 60 տարեկան էր:

Սրանից աւելի պատիւ չէր կարելի անել պատուաւոր բժշկապետին: Սրանք ամենքը լաւ. բայց երկաթուղին 10 օր առաջ 40 հիւանդ բերաւ, որոնց քսանը Կովկասի այլ և այլ քաղաքներից եկած հաստատոր, բարակատոր հարուստ հայ վաճառականներ են: Յատկապէս պրոֆէսօր Դուխէքի համար եկել են, բայց ուշ, շատ ուշ, հիմի սրանց ով պիտի բժշկէ, խեղճ մարդիկը պիտի մեռնեն անօգնական, գնալ կրկին Կովկաս վերադառնան և օր առաջ իրանց կտակը պատրաստեն, առանց մոռանալու ազգային որ և է բարեգործական ընկերութեան բաժին մը հանելու:

Կրաս

բուած մի հացկերոյթի առթիւ, համալսարանական երիտասարդի մը գինւոյ բաժակ ի ձեռին՝ արտասանած ճառին համառօտութիւնը:) Պարոններ!

Այս բաժակը առաջարկում եմ Շիլլերի կենացը, չը նայելով որ Շիլլերը կենդանի չէ, բայց առաջարկում եմ նորա անմահացեալ անունը, նա ասել է «Զար մարդը երդ չէ սիրում», չը նայելով որ Շիլլերը այսպէս է ասել, եթէ Շիլլերը այսպէս չասէր, չը նայելով որ ես ինքս Շիլլերի հետ չեմ համաձակվում բաղդատել, բայց հաւատացնում եմ ձեզ որ ես էլ նոյնը կասէի, եթէ նա ինձանից առաջ ասած չը լինէր: Զը նայելով, որ Շիլլերը եմ ձեզ որ ես էլ նոյնը կասէի, եթէ նա ինձանից առաջ ասած չը լինէր: Զը նայելով, որ Շիլլերը օտար ազգի է պատկանում, բայց ես ուսումս Գերմանիայում աւարտած լինելով և չը նայելով որ գերմանացի չեմ, նոյն գիտողութիւնը, հայ լինելով, կարող էի անել: Սրանից ուզում եմ հեռացնել որ, չը նայելով որ մեր ազգային երգերը հետզհետէ մամուլի տակից դուրս են գալիս, չը նայելով որ շատերը ժողովրդական բարբառով գրված են, հէնց այդ գիւղական բարբառի մէջ պիտի պտռել Հայաստանի պատմութեան ոգին: Զը նայելով, որ այս ասածներս ինչ աստիճան ձեզ ճշմարիտ կը թվին, և որքան ընդունելութիւն կը գտնեն, բայց ես ինքս համոզված լինելով և չը նայելով որ շատ կարելի է ձեզանից մերժողներ էլ լինեն, ես հաւատացած եմ և հաւատացնում եմ ձեզ, որ միշտ երգն է եղել և պիտի լինի մի բեռտա նորից յայտնվեցաւ այդ ժողովի բիւդժետային մասնաժողովի անդամների ընտրութեան ժամանակ, զրում է „Голосъ“ լրագիրը: Մասնաժողովի մեծամասնութեան անդամները կազմում են այն պատգամաւորները, որոնք Լէօն Սէի ֆինանսական նախագիծների կողմնակից և նախկին մինիստրութեան ֆինանսական քաղաքականութեան թշնամիներ են: Այդ ընտրութիւններին աւելի մեծ նշանակութիւն տալու համար մասնաժողովը իր նախագահ ընտրեց հանրապետութեան նախագահի փեսայ և ծիլ ֆերրիի կառավարութեան ֆինանսների մինիստրի օգնական Վիլսօնին: Քանի որ բիւդժետային մասնաժողովը այդպէս է կազմված, նա կընդունի ֆինանսների այժմեան մինիստրի բոլոր առաջարկութիւնները և երկաթուղիները պետութենից յետ դնելու հարցը այնպէս կը վճռի, որ բոլորովին հակառակ կը լինի Գամբետտայի կառավարչական նախագծի գլխաւոր կէտերից մէկին:

Պ. Ֆրէյսինէ և նրա ընկերները կարող են ազատ շունչ քաշել: Այլ ևս նրանց վրա ոչ ոք սպառնում շուտով կորցնել մինիստրական պաշտօնները: Գործին անձանօթ անձինք կարող են ենթադրել, որ մինիստրութեան դրութիւնը կատարելապէս ամրացել է, որովհետև պատգամաւորների ժողովի մեծամասնութիւնը նրա կողմը յայտնվեցաւ:

Բայց չը պէտք է մոռանալ, թէ վերոյիշեալ անցքը ինչպէս կատարվեցաւ: Այժմ ամենքի համար ակներև է, որ Լէօն Սէի նախագիծների կողմնակից մասնաժողով ընտրող պատգամաւորների եռևը կանգնած են երկաթուղիների հզօր ընկերութիւններ, որոնց Գամբետտա կամենում էր զրկել ահագին եկամուտներից և նրանց պետութեանը յատկացնել: Գամբետտա, վերջին տարիների ընթացքում թոյլ չը տալով արմատականներին ղեկավարել երկրի գործերը, այնպէս զայրացրեց նրանց իր դէմ, որ նրանք համաձայնութիւն կայացրին այն հանրապետականների հետ, որոնք իրանց հովանաւորութեան տակ են արել երկաթուղիների ընկերութիւններին: Բայց այդ համաձայնութիւնը երկարատև չէ կարող լինել: Արմատականները շուտով կը հասկանան իրանց գործած սխալը: Իսկ եթէ նրանք չեն փոխի իրանց բռնած ընթացքը, այն ժամանակ նրանց ընտրողները լուռ չեն մնայ: Մինչև այժմ պ. Ֆրէյսինէ աշխատում էր փայփայել արմատականներին և նրանց իր

*) Ընդհակառակը մեծ կարողութիւն թողուց.

օտար զօրութիւններ իրենց օգնելու ալ ըլլան:

Կաթողիկոս եղող անձն իւր ընդունած բարձր աստիճանը ճանչնալով՝ պէտք չէ որ խարուի օտարին ըրած փայլուն խոստումներէն. նոյնպէս պէտք է լաւ գիտնայ թէ օտարը զինքը որչափ ալ փառաց ի փառս բարձրացնէ, ազգն իր կաթողիկոսին բուն տէրն ըլլալով՝ կարող է մէկ ձայնով զինքն վար ձգել իւր այդ բարձրութենէն. որովհետև խնդիրը ինչպէս ըսինք, զուտ կրօնական ըլլալով՝ օտար ձեռք մը իրաւունք չունի միջամտելու:

Եթէ Կաթողիկոսը ազգին ներկայ անիշխանական վիճակէն օգուտ քաղել ուզելով, հակառակ ազգին կամաց իւր կամքն կուզէ քալեցնել, չարաչար կը սխալի. որովհետև եթէ այսօր ազգն անիշխան վիճակի մէջ կը գտնուի, հարկաւ մինչև յաւիտեան այս վիճակն չը շարունակէր:

Եթէ այսօր Հայ կղերն կատարեալ լռութիւն մը պահած է, տարակոյս չը կայ թէ իւր լռութեան կապը օր մը պիտի խզէ:

Եթէ ժողովուրդն այսօր իւր վրայ անտարբեր աչք կը դիտէ, վաղը իւր ցոյց տուած այս անտարբերութեան դառն պտուղները վայելելով իւր ձայնը մինչև երկինք պիտի բարձրացնէ:

Վերջապէս եթէ այսօր ժամանակն իրեն օգնելու և նպաստելու վրայ է, թող չը կարծէ թէ միշտ այսպէս իրեն կը նպաստէ. վասն զի ժամանակը կրնայ ըլլալ որ իւր այս օրուան տեսածները օր մը բոլորովին այլափոխէ, զինքը կորստեան անդունդը գահավիժելով:

(Մամուլ)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՑԻՑ

Կ. Պոլիս, 10 մարտի 1882

Թէ այստեղ և թէ այդտեղ՝ բնական է մեզ երբեմն քննել թէ վերջի քսան տարիներու մէջ որ երկրի հայերն են աւելի մեծ քայլ առած դէպի քաղաքակրթութիւն, որտեղ աւելի ստուար է զարգացած մարդոց խումբը, որտեղ կան, ինչպէս կըսեն, աւելի հասունցած անձինք: Այս բաղդատական քննութիւնը շատ անգամ մեր ընկերութեանց մէջ խօսակցութեան նիւթ է և զերծ չէ, ի հարկէ, օգտակար և խրախուսիչ ըլլալէ:

Դանօթ է ամենուն Կ. Պոլսոյ հայուն ինքնագով բնաւորութիւնը, ուստի պիտի զարմանաք անտարակոյս երբ իմանաք, որ ներքին համոզմամբ ոչ ոք կը վարանի այստեղ խոստովանել թէ՝ ռուսաբնակ հայերն թէ նիւթական և թէ մտաւորապէս զարգացման մասին, թիւրքաբնակ հայոց վրայ առաջնաւորութիւն ունին: Այս յանդիմանութիւն մը չէ որ կուզենք ընել այստեղի հայերուն, վասն զի անոնք իրաւամբ մեզ կրնան առարկել թէ սա բնաւ զարմանալի բան չէ, քանի որ նիւթականն է մտաւորականի և բարոյականի զարգացման նպաստող, քանի որ քաղաքական միջնավայրն է միշտ կուլտուրի յառաջանալուն օժանդակող: Մենք միայն մի էութիւն է որ կուզենք հաստատել, գովելով, գտնէ այս մասին, թիւրքաց հայոց արդարադատութիւնը:

Այս համոզումը մեր մէջ գոյացած ըլլալով՝ ի հարկէ մենք ալ Ռուսիոյ պարբերական հայ թերթերը աւելի ուշի ուշով կը կարդանք և աւելի խստութեամբ կը դատենք: Այս պատճառաւ է որ սաստիկ զարմացումը մեզ կը պատէ, երբ մեր սպասածին հակառակ՝ կը նշմարենք երբեմն այդ տեղի հայ օրգաններու մէջ փտած, մոլորեցուցիչ, անհեթեթ գաղափարներու արտայայտութիւնը. երբ կը տեսնենք այնպիսի անձնաւորութիւններ հրապարակախօսի դեր կատարել, որք ոչ միայն անգոյն, անհասատ գաղափարներու կը ծառայեն, այլ նաև հանրածանօթ եղած են այդտեղ և այստեղ քսութեան, կաշառակերութեան, անբարոյականութեան դրօշներովը. որք փոխանակ իրենց տխուր անցեալը մոռացութեան տալու՝ կը ժպտին կրօնասիրութիւն, առաքինութիւն և ազնուութիւն քարոզել ուրիշի, և սկզբունքներու ջատագով կանգնել:

Ընթերցարանի մը մէջ այս օրերս աչքիս հանդիպեցաւ մի լրագիր, որու մահուան դատավճիռը անցեալ տարի տուած էր, կը կարծէի, լուսամիտ հասարակութեան անտարբերութիւնը: Շիտակը խօսելով՝ կարծեցի պահ մը որ այդ լրագիրը իր ուղղութիւնը լաւացնելով անգամ մը ևս ճիգ մը կընէր իր գոյութիւնը ապահովելու համար: Ցուսացի որ այդ նպատակաւ իրեն օգնութեան հրաւիրած էր ազգին խելահաս և պարկեշտ հրապարակախօսները: Պատրանքս շատ չը տևեց երբ տեսայ մի անձի անուն որ կը տիրեր այնտեղ իր խմբագրական յօդուածներովը, ֆէլիէտօններովը, մանրալուրերովը, երբ տեսայ վերջապէս որ ամբողջ լրագրին նա տէրն և իշխանն էր եղած: Մեծ երաշխաւորութիւն այդ թերթին ապագային համար: Կար ժամանակ որ այդ պարոնը գտնէ փսեւոնիմներով ծածկուելու անօթխածութիւնն ունէր. հիմայ բաց ի բաց կը ստորագրէ իր ժահրահոս և անվերջանալի յօդուածները: Մեծ յառաջադիմութիւն:

Հարկ չէ ըսել որ այդ պարոնի յարձակմանց նշանակէտը գլխաւորապէս «Մշակի» խմբագրական է: «Մշակի» դժբաղդութիւնն է, որ այս պարոնի արժողութեամբ հակառակախօսներ պիտի ունենայ միշտ: «Մշակը» այդպիսիներու միայն աչքին փուշն է, պատճառ, վասն զի նա կը հարուածէ մինչև ազգին անարժան գործիչները:

Վայել է այդ տեսակ հրապարակախօսներին հեղնութեամբ խօսել ուրիշի ազնուութեանը վրայ, երբ իրենք ամբողջ քաղաքի պատուաւոր ընկերութեանց index-ը դրուած են, ճիշդ իրենց ապնիւ անցեալի համար: Վայել է այդ պարոններուն բաղդախնդիր անուանել մի օտարազգի լրագրապետ որ հայոց համար մէկ տարուան մէջ աւելի ծառայութիւն է մատուցած որչափ իրենք բոլոր կեանքերնուն մէջ: Ո՞վ է աւելի բաղդախնդիրը, այն օտարը որ անկեալ ազգի մը դատը կը պաշտպանէ ըստ իր կարողութեան, թէ այն հայը, որ ամբողջ ինն տարի Եւրոպոյ մէջ կը թափառի fürst von Armenien տիտղոսը առնելով և օգուտ կը քաղէ ընտանեաց մէջ այն առաւելութիւններէն որ կընծայէ ամեն տեղ այսպիսի փառաւոր մի տիտղոս: Վայել է այդ պարոններուն յարձակիլ այժմ այնպիսի պատուաւոր անձնաւորութեանց, գործիչներու վրայ, որք ամեն հայրենեաց աղէտներու առեն, ամեն օգտաւէտ հիմնարկութեանց առթիւ, անձնուիրաբար զոհեր են իրենց անձը և ժամանակը, ջերմ հրաւէրներ են կարդացեր հասարակութիւնը իր թմրութենէն սթափեցնելու համար, մինչդեռ իրենք, նոյն միջոցին, երբ հայաստանցին անօթութենէ կը մեռնէր, իրենք նախապատիւ կը համարէին Գօնիտուանի ղերը խաղալ և ժամանակ անցնել փոքրիկ աստղերու առաջ ծիրագիր խնկարկելով: Քանդել ուրիշի կատարածը, միմիայն այն պատճառով որ ուրիշի կատարածն է, աւերել ինչ որ ուրիշը կը յաջողի կառուցանել հազար և մէկ դժուարութեանց յաղթելով, չի հաւանել այլոց մատուցած ծառայութեան և ինքը ոչինչ գործել, զի գործելու ոչ կարողութիւնն ունի և ոչ ընդհանրութեան վստահութիւնը, ահա այդ ինքնակոչ հրապարակախօսներուն վարած պաշտօնը: Ցիմար պատգամներ որոտալ ամեն առաւօտ, առանց մէկ ինքնատիւվի կարող ըլլալու և առանց մէկ կաթիլ վարկ վայելելու հասարակութեան կողմէն, ինչ նախանձելի գործունէութիւն: Բախտախնդրութիւն չէ՞ միթէ Կ. Պոլսոյ մէջ ֆոտոկրաֆիաներ ցրուել «դոկտոր փիլիսոփայութեան» ստորագրութեամբ և ինքզինքը ծանօթացնել այստեղ իբր յառաջիկայ տարուան հայ թատրոնի մասնաժողովի ներկայացուցիչը և յայտարարել թէ իր բեցենդենտական հանճարը պիտի յաջողի խանդարել այժմեան թատրոնական խումբի ներդաշնակցութիւնը, որպէս զի կարող ըլլայ ապա փայլեցնել տալ իր անունը:

Երբ մարդ յանուն արժանաւորութեան, յանուն բարոյականութեան և ազնուութեան կը խօսի, հարկ է երբեմն փոքր ինչ ինքն իր անդրադառնայ և տեսնէ թէ իրաւունք ունի՞ արդեօք յանուն իր մէջ բացակայ բարեմասնութեանց քարոզել: Մենք չենք այլալիր չափէն աւելի երբ կը հանդիպենք հրապարակախօսի մը, որու դրած ամեն մէկ տողը անձնական անխոստովանելի շահերէ թելադրուած է: Եթէ յանկարծ մարդ մը երևան կուգայ որ քսութիւնը իրան օգնութիւն կը կանչէ որպէս զի իր անձնական առելութիւնը յագեցնէ և իր վարձեալ պատասխանատուութիւնը կատարէ, սա մեզ չի զայրացներ: Երբ կը նշմարենք հայ մը որ ամեն ազգային օգտակար հիմնարկութիւն տապալել կը տքնի առանց անոր տեղը ուրիշ բան մը կարողանալ կանգնեցնելու, և պատուաւոր, ժրաջան գործիչները անուանարկել աշխատելով, ժողովուրդը ապերախտութեան կը վարժեցնէ, այդ մեզ չի զարմացներ բնաւ: Վատ խոտը ամեն տեղ կը բուսնի: Բայց մենք չենք կարող նաև չի հաստատել թէ այդպիսի հրապարակախօսներու ստորագրութիւնը, զայն հիւրընկալող լրագրին բարձրութեան աստիճանը ցոյց կուտայ շօշափելի կերպով և անոր ապագան նախագուշակելը կը դիւրացնէ մեզ:

Եթէ «Մշակը» իրաւամբ կարհամարհէ այդպիսի լպիրշ յարձակումները և անոնց գաւեղիկ հեղինակները, նոյնը չենք կարող ընել և մենք, վասն զի մենք հեռուէն յոյժ նպաստաւոր գաղափար մը ունինք ռուսիաբնակ ազգայնոց գործիչներուն վրայ, և երբ երբեմն կը նշմարենք անոնց մէջ այսպիսի տխուր անձնաւորութիւններ, փոքր ինչ մեր մաքերը կը պղտորին և չենք գիտեր ինչպէս բացատրել թէ անոնք երկար ատեններ ասպարէզ կը գտնեն այդտեղի ողջամիտ և զգայուն ժողովրդեան մէջ: Երկիւղ մեծ կը զգանք միանգամայն որ մի գուցէ դեռ ուրիշներն ալ վարակուելով, անարդ խմբակը ստուարանայ առաւել:

Ամեն անգամ որ կը լսենք այդտեղ մի անձի անուն, որ փայլ կուտայ հայ անուան՝ իսկոյն մեր սրտին հրճուանքը կարտայայտենք ձեզ: Ի՞նչու պէտք է լսենք և չը յայտնենք մեր զգացած նողկանքը բացառութիւններու առաջ:

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Polit. Corresp.» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ սուլթանը հրամայեց գերմանական խորհրդատուներին որքան կարելի է կարճ ժամանակում մշակել մէկ ծրագիր այն բանի մասին, թէ ինչ կերպով պէտք է մտցնել Թիւրքիայում թագաւորի յարաբերութեան մասին օրէնքը մինիստրութեան հետ:

—«Times» լրագիրը հաղորդում է, որ թէ պալատում և թէ Բ. Դրան մէջ ձգտումն է երևում բարեկամական յարաբերութիւններ հաստատել Ֆրանսիայի և Բ. Դրան մէջ: Պալատի օրգան «Էլ-Զէվայիբ» լրագիրը, որը մինչև այժմ կատաղած յօդուածներ էր գրում Ֆրանսիայի դէմ, այժմ սկսում է գովել Ֆրէյսինէի մինիստրութիւնը այն բանի համար, որ նա աշխատում է հաշտեցնել հանրապետութիւնը Բ. Դրան հետ:

—«Times» լրագրին Ֆիլադէլֆիայից հեռագրում են, մարտի 10-ից հետևեալը: Պատգամաւորների ժողովը շարունակում է վիճաբանութիւնները չինացիներին պաշտպանելու մասին: Զինաց դեսպանը ապառնում է, որ եթէ առաջարկութիւնը իր այժմեան ձևով կընդունուի, այն ժամանակ ստիպուած կը լինի դիպլոմատիական յարաբերութիւնները կտրել Երկնային Կայսրութեան և Միացեալ-Նահանգների մէջ, փակել չինական նաւահանգիստները Դաշնակցութեան առևտրի համար և արտաքսել ամերիկացի միսիոնարներին: Ամբողջ մամուլը զբաղուած է այդ հարցով:

—«Köln. Ztg.» լրագրին Փարիզից հեռագրում են, մարտի 11-ից: Այսօր սենատում շարունակւում էին վիճաբանութիւնները դպրոցական հարցի վերաբերութեամբ: Կղերականները չորս առաջարկութիւններ արին, որոնցով անաստուածներին արգելւում է ուսուցչական պաշտօններ ունենալ: Նիստը շատ աղմկալի էր: «Անաստուածութեան ուսմնարան», «անաստուածութեան օրէնք» աղաղակները լսւում էին ամեն կողմից: Բոլոր չորս առաջարկութիւններն ևս մերժուած են: Վերջապէս, կղերականները մատնացոյց արին այն բանի վրա, որ նոր օրէնքը վատ տպաւորութիւն կը գործի Էլզասում: Բայց չը նայելով այդ ընդիմախօսութեանը, օրէնքը ընդունուեցաւ 179 ձայների մեծամասնութեամբ 108-ի դէմ:

—«Իզյտերի ընկերութեանը» Վիէննայից հաղորդում են, մարտի 21-ից, որ ապստամբները կրկին երևեցան, գլխաւորապէս, այն շրջանի հիւսիսային մասում, որը մինչև այժմ ապըստամբութեան գլխաւոր կենտրոնն էր:

—«Իզյտերի ընկերութեանը» Հռոմից հեռագրում են, մարտի 20-ից, որ Բավէնոում այս օրերս մեծ անկարգութիւններ պատահեցան: Մէկ ժողով, որ կայացել էր Փարիզի կոմունայի տարեդարձը կատարելու նպատակով, հրաժարւեցաւ հնազանդել վարչութեանը, որը կամենում էր ցրուել նրանց: Կռիւ ծագեց զօրքերի հետ, որտեղ սպանուեցաւ մէկ կարաբինէր, իսկ միւսը վիրաւորուեցաւ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագիրը հաղորդեց մեզ, որ մարտի 25-ին վախճանուեցաւ Ամերիկայում նշանաւոր բանաստեղծ Լոնգֆելլո: Հենրի Ուադսվորտ Լոնգֆելլո ծնուեցաւ 1807 թուի փետրվարի 27-ին և տասն ու չորս տարեկան հասակում մտաւ Բրէօնսուիկում եղած Բաղդէնի կոլէջում, որտեղից դուրս եկաւ գիտնական աստիճանով: Դեռ ևս դպրոցական աթոռի վրա նստած ժամանակ, նա ոտանաւորներ էր գրում «Միացեալ-Նահանգների Գրականական Լրագրի» համար: Նա ուսումնասիրում էր իրաւաբանութիւնը իր հօր առաջնորդութեամբ, երբ նրան, չը նայելով նրա երիտասարդ հասակին, առաջարկեցին նոր լեզուների ամբիոնը նոյն կոլէջում, որտեղ նա ուսումը վերջացրեց: Դեռ ամբիոնը ընդունելուց առաջ, նա պտտեց համարեա բոլոր Եւրոպան և 1829 թուին վերադարձաւ Բէօնսուիկ, ուր պրոֆէսորի պարտականութիւնները կատարելու հետ միասին, նուիրում էր իր ազատ ժամանակը բանաստեղծութեան: 1835 թուին, արդէն հռչակվելով «Ծովի այն կողմը» բօմանով, նա, Տիկնորի տեղ, նշանակվեցաւ նոր լեզուների դասատու Կէմբրիջում: Լոնգֆելլո նորից սկսեց ճանապարհորդել հիմնաւորապէս ծանօթանալու համար Հիւսիսային Եւրոպայի լեզուների և գրականութեան հետ և մէկ տարուց աւելի ճանապարհորդում էր Դանիա, Շվեդիա, Գերմանիա և Շվեյցարիա: 1842 թուին նա կրկին կարճ ճանապարհորդութիւն արաւ Անգլիայում և Ֆրանսիայում: 1854 թուին նա հրաժարական տուեց իր պաշտօնից: 1869 թուին էլի մի անգամ Եւրոպա գնաց, և նրան Անգլիայում մեծ ընդունելութիւն արին: Յուլիսի 27-ին Օքսֆորդի համալսարանը քաղաքական իրաւունքների դոկտորի պատուաւոր աստիճանը տուեց նրան, որը մեծ ծափահարութիւններով ընդունվեցաւ: Լանգուցեալ բանաստեղծը բազմաթիւ նշանակութիւն ունեցող հեղինակութիւններ ունի, որոնց յիշելը աւելորդ ենք համարում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է. Թագաւոր Կայսրը մարտի 19-ին թոյլ տուեց գործարանատէրերի ժողով կայացնել Մոսկվայում յունիսին: Կօխանովի մանաժողովի պարապմունքների նախագիծը կը քննվի մինիստրների խորհրդի մէջ մարտի 23-ին: Ս. Պետերբուրգի պոլիցմէյստերի պաշտօնը միացրած է ժանդարմների շտաբի հրամանատարի պաշտօնի հետ գործողութիւնների միութեան համար: „Journal de St.-Petersbourg“ վճռողականապէս հերքում է լրագրական լուրերը, իբր թէ Ռուսաստանի մէջ հինգ տարի ապրող օտարականներին կառաջարկվի ընդունել ռուսահպատակութիւն և կառավարութեան գիտաւորութիւնը դադարեցնել Լօնդօնի մէջ ռուսաց արժէթղթերի պաշտօնական գնահատութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95 ր. 62 կ., երկրորդ 91 ր. երրորդ 91 ր. 75 կ., չորրորդ 90 ր., հինգերորդ 90 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 216 ր. 75 կ., երկրորդ 211 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 90 ր. 37 կ., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր., ոսկի 8 ր. 13½ կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,15 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ, Փարիզի վրա 254 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱ

ՍՕԼՕԼԱԿՈՒՄ

Պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի մեծապատիւ հասարակութեան, որ առաջիկայ Զատկի տօնի համար ընդունում եմ պատուէրներ պասքի, կուլիչի, պօլսկի մազուրկայի, տօրտի և ամենայն տօնին յարմար բաների. վստահ լինելով իմ նոր բերել տված վարպետներիս հմտութեան վրա ամեն վըստահութեամբ դիմում եմ մեծ. հասարակութեան որ չը զլանան դիմելու մեզ իրենց պատուէրովը։

Մ. Հախնազարեանց

ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅՆ

Հայոց Վրաստանի և Իմերէթի ծանուցանէ, թէ նրա ատենումը նշանակած է ամուրդ 5-ին ապրիլի ներկայ տարվայ և կրկնամուրդ 6-ին նոյն ամսի, կապալաւ տալու եկեղեցական գիւղերը, որոնք գտնվում են Ախալքալաքի գաւառում Թիֆլիսի նահանգի։ Պայմանները ցանկացողք կարող են տեսնել կոնսիստորիայի դիւանատանը ամեն օր, բացի տօներից, առաւօտեան 9-ից մինչև 2 ժամն։

ՔԻՄԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Ամենաանվնաս, բոլոր գոյների հետ գործածութեան եղանակը։ Պրովանսեան ՁԷԹ ֆունտը 60 կ., և տուալէտի նոր պատկանելիքներ։ ԳՐԻՎՆԱԿ, Լօնդօն Հիւրանոցի տակ։

2—5

ԲԱԹՈՒՄ

Աջնանորոգի բանվոր ունենալով գործարանի մոտերքում 4 ձգ 4 ձգտրամագիծ ունեցող 7 մետր ծանրութեամբ 4 մետրանոց ՄԱՆԵԼԻ ԿԵՐԵՎ ՊԱՏՐԱՍՏ ՊԱՀԱՆՋՈՎ։ Ուզողները դիմեն Գեորգիևսկայա փողոցի տունը։

3—3

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑՈՒՄ լաւ ԾԽԱԽՈՏԻ սիրողները և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր Թիւրքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի։ Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծըխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ճաշակին։ Ծխախոտի գինը, ֆունտը 3 ռուբլուց մինչև 10 ռուբլ, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 ռուբլուց, մինչև 3 ռուբլ։

Գործարանս գտնվում է 3-րդ բաժնում Հեռագրական կայարանի մոտ, իսկ մագազինս Արծրունու գալլերէում, Դվորցովի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում։

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ

11—25

Ա. Ս. ԾՈՒՐԻՆՕՎԻ և ընկերութեան դեղական պահեստը պատիւ ունի յայտնել, որ այսուհետև առևտուրը կը կատարվի հետևեալ ֆիրմայով. **ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** («КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТОРГОВЛИ АПТЕКАРСКИМИ ТОВАРАМИ"), որի կանոնագրութիւնը ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված է ներկայ 1882 թ. յունվարի 29-ին։ Ընկերութեան պահեստը գտնվում է Խիտարովի տանը, Թանդարանի դէմ։

5—7 (եր. և ուր.)

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ռ., ԾԸԾԻՀՆԵՐ 1 ռ., հայելիներ 35 կ., վարսիքներ 4 ռ., պիջակներ 6 ռ., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ռ., գլխարկներ 1 ռ., ՀԸ ԹՐՋՎՈՂ վերարկուներ 6 ռ., շչէօակա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ռ. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, տրիկօ, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՑ։

3—50

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արծրունու գալլերէում, № 144 ԾԽԽՈՎՈՒՄ է արժան գներով ամեն տեսակ ՄԵՏՕՔԻ, նոյնպես խանութի մէջ Տօնէա Ֆաբրիկայի ՀԱՑԵԼԻՆԵՐԸ և ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ։

7—60

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօրվինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

ՎԻԷՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ

36 ՌՈՒԲԼ

Եփ. Ծատուրեանցի դէպոյում

8—20

ԱՐԴԻՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Ռուսաց յայտնի գրող **ՎՈՒԶԵՏԻՉԻ** „ДВѢ ЕЛКИ" մանկական գրքուկի հայերէն թարգմանութիւնը **„ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ"** անունով։

Այս գրքոյկը ընդունել էր տպագրելու Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու։ Տպագրված է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տառերով։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ։

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնական գրավաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետևեալ հասցէով.

Тифлисъ—на Авлабаръ Ивану Петровичу *Назаріанцъ.*

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԻՏԷ

ԱՊԱԿԻՆԵՐԻ գործարանս բացված է և պատրաստում է ՇԻՇԵՐ, ԲԱՆԿԱՆՆԵՐ, ԲԺՇԿԱԿԱՆ ՇԻՇԵՐ, ԹԷՑԻ ԱՄԱՆՆԵՐ, ամեն տեսակ առարկաներ ԼԱՄՊԱՆԵՐԻ համար։

Նոյնպէս ընդունում է պատուէրներ առանձին ձևերի։

Գործարանիս արդիւնքները ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ծախվում են **ՍԻՄԷՆՍԻ** և **ԳԱԼԿԷԻ** կանտորայում Թիֆլիսի երկրորդ գիմնազիային կից։

ԲԱՐՕՆ **ՖՕՆ-ԿՈՒԶԵՆԲԱԽ**

4—5

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ռ. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ռ. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ռ. ամանը և վրձին գլխաչափ դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն

97—100

Միջի փողոց, Կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ռ., չամադաններ 250—25 ռ., սակվոյաժներ 1. 30—12 ռ., սուն դուկներ ճանապարհի 6—35 ռ., մարաններ (погребцы) 6—25 ռ., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտ., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամորնի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լուլանի 6—32 ռ., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրոնները. (գուլանները) ռէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՎ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էյնէմի. կօֆէ էյնէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժինը. գրչակոթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ռ., դանակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կարելու մաշինայ. Անգլիական ութոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրահմալ կարօրկէն 18 կ., փաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չուտիչկէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբանները կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկրէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թել (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусь) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այն և այն և այն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

17—180

Միջի փողոց, Կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Марта 1882 года. Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.